ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն՝ ----------

«01» ---------09---------2022 թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

«Երևանի Հովհաննես Պողոսյանի անվան հ. 82 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

III բ դասարան

ուսումնական հաստատության անվանումը, դասարան

Անտոնյան Գոհարիկ Շահենի

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

«2022- 2023 » ուսումնական տարի

Կրթական դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

Ներածություն (դասարանի ընդհանուր բնութագիրը)

Դասարանը բաղկացած է 35 աշակերտից՝ 20 աղջիկ,15 տղա։ Մեկ աշակերտ դուրս է եկել, ավելացել է մեկ աշակերտ՝ Ստեփանյան Դանիելլան։ Դասարանի կոլեկտիվն ավելի համերաշխ է դարձել, քան նախորդ տարում։ Բավականին փոխվել են Տիգրանը և Սերգեյը, ովքեր Հիմնականում կոնֆլիկտներ ստեղծողներն էին։ Մեկ տարով մեծանալով մյուս աշակերտներն էլ ավելի հանդուրժող են դարձել։ Արվում է ամեն ինչ , որ ուսումնական գործընթացը չխաթարվի։

Ուստարվա ընթացքում նախատեսվող ուսումնադաստիարակչական աշխատանքները

Հայեցի դաստիարակություն

Հոգևոր դաստիարակություն *Խնդիրները՝*

Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ։ Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը։

Կարդալ հատվածներ «Մանկական աստվածաշունչ» գրքից։ Կազմակերպել հանդիպում- զրույց դպրոցի «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի ուսուցիչ Ա. Թարվերդյանի հետ։

Գեղագիտական դաստիարակություն- *Խնդիրները՝*

Մշակույթը կրող, ստեղծագործական ակտիվություն ունեցող անձի ձևավորում: ------Տոների առթիվ պատրաստել անհատական բացիկներ և պաստառներ: Երեխաներին տալ հնարավորություն ստեղծագործելու թեմայի շուրջ և օգտագործել սեփական աշխատանքները: Կազմակերպել այցելություններ թատրոն, կինոթատրոն, թանգարան, ցուցահանդես և այլն *:*----------

Ռազմահայրենասիրական դաստիարակություն *Խնդիրները՝*

Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք հայրենիքի, ակնածանք՝ հայ ազատամարտիկների նկատմամբ: Բնավորության մեջ ձևավորել հայրենասիրություն և ռազմարվեստ:-- Կազմակերպել այցելություն «Եռաբլուր» և ծաղիկներ խոնարհել, հարգանքի տուրք մատուցել դպրոցի բակում զոհված ազատամարտիկների հիշատակին-- կառուցված *հուշակոթողին:* Զրուցել « Մեր երկրի անվտանգությունը մեր ձեռքերում

է»թեմայով։----------

Ֆիզիկական դաստիարակություն *Խնդիրները՝*

Ֆիզիկական զարգացմանն ուղղված պայմանների ստեղծում, վնասակար սովորությունների հանդեպ բացասական վերաբերմունքի ձևավորում:

Համագործակցել ֆիզկուլտուրայի ուսուցչի հետ և հաճախակի կազմակերպել խմբային, թիմային խաղ-մրցույթներ, սպորտլանդիաներ՝ ներգրավելով նաև ընտանիքի անդամներին: Զրուցել վնասակար սովորույթների մասին և համեմատելով դրական արարքների հետ, ձևավորել բացասական վերաբերմունք:

Աշխատանքային դաստիարակություն *Խնդիրները՝*

Աշխատանքային հմտությունների և կառուցողական վերաբերմունքի խթանում:

Դասարանում սահմանել հերթապահություն, ունենալ ավագ և օգնականներ, որոնք կհետևեն դասարանի մաքրությանը: Մասնակցել դպրոցի կողմից կազմակերպված շաբաթօրյակներին: Ձևավորել մշակույթ ուշադիր և հոգատար լինել շրջակա միջավայրի մաքրության նկատմամբ:

Բնապահպանական դաստիարակություն *Խնդիրները՝*

Բնության հանդեպ հոգատար վերաբերմունքի ձևավորում

Կազմակերպել քննարկում « Էկոլոգիական հիմնախնդիրներ» թեմայով: Հանձնարարել երեխաների հավաքել տեղեկություններ էկոլոգիական խնդրիների մասին իրենց շրջապատում, քննարկել և միասին գտնել լուծումներ:

Վարժ. «Յոթ չափենք, մեկ թափենք»: Պատմ. «Աղբն ով թափեց»:

Դպրոց-ընտանիք կապը *Երեխաները պետք է հասկանան, որ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը: Միևնույն ժամանակ գիտակցեն, որ պետք է սերտ կապի մեջ պահեն դպրոց-ընտանիք կապը, որպեսզի ավելի լավ սովորեն:*

Զրուցել ընտանիքի կարևոր դերի մասին յուրաքանչյուրի կյանքում: Հաճախակի կազմակերպել հանդիպումներ ծնողների հետ: Կազմակերպել փոքրիկ դաս-միջոցառումներ՝ մասնակից դարձնելով նաև ծնողներին:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ԴԱՍՂԵԿԻ ԺԱՄ

1-ին կիսամյակ		2-րդ կիսամյակ	
Շաբաթվա օրը	դասաժամը	Շաբաթվա օրը	դասաժամը
չորեքշաբթի	6-րդ ժամ		

Ուսումնական շաբաթներ	Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակություն	Կատարման ամսաթիվ	Կատարվել է
I	Դասագրքերի հանձնում։ Կազմակերպչական հարցեր։		
II	Զրույց «Ընկերություն» թեմայով։		
III	Զրույց Հայ Առաքելական եկեղեցու տաղավար տոներից՝ <<Սուրբ խաչի>> մասին։		
IV	Զրույց <<Սեպտեմբերի 21-ը Հայաստանի անկախության օրն է>> թեմայով։		
V	Զրույց << Արդյունավետ հաղորդակցում>> թեմայով։		
VI	Զրույց << Հոկտեմբերի 5-ը ուսուցչի տոնն է>> թեմայով։		
VII	Քննարկում՝ <<Խնդիրների համատեղ լուծում, որոշումների կայացում>> թեմայով :		
VIII	Զրույց <<Համագործակցություն>> թեմայով։		
IX	Զրույց «Կոնֆլիկտների հաղթահարում» թեմայով։		

X	Քննարկում «Երեխայի իրավունքները» թեմայով։		
XI	Զրույց «Նոյեմբերի 16-ը հանդուրժողականության համաշխարհային օրն է» թեմայով։		
XII	Զրույց «Բանակցություններ» թեմայով։		
XIII	Զրույց « Միջնորդություն» թեմայով։		
XIV	Քննարկում «Ինչպես պաշտպանվել աղետների ժամանակ» թեմայով։		
XV	Քննարկում «Անվտանգ երթևեկություն» թեմայով։		
XVI	«Շնորհավոր Ամանոր» տոնական միջոցառում։		
XVII	Քննարկում « Կախարդական բառերի ուժը՝ շնորհակալություն, խնդրում եմ. . .» թ.		
XVIII	Զրույց « Սեռային խնդիրներ» թեմայով։		
XIX	Զրույց « Շնորհավոր տոնդ, Հայոց բանակ» թեմայով։		
XX	Քննարկում « Ակտիվ քաղաքական դիրքորոշում» թեմայով։		
XXI	Քննարկում « Գնահատիր ինքդ քեզ» թեմայով։		
XXII	Դասարանական միջոցառում նվիրված Հ. Թումանյանի ծննդյան և գիրք նվիրելու օրվան։		
XXIII	Զրույց նվիրված Մայրենիի միջազգային օրվան։		
XXIV	Քննարկում « Էկոլոգիական հիմնախնդիրներ» թեմայով։		
XXV	Միջոցառում « Շնորհավոր տոնդ, սիրելի մայրիկ» թեմայով։		
XXVI	Զրույց « Միջմշակութային փոխըմբռնում» թեմայով։		
XXVII	Վիկտորինա- մրցույթ «Ճանապարհային երթևեկության կանոնները»		
XXVIII	Զրույց «Ապրիլի 7-ը մայրության և գեղեցկության օրն է» թեմայով։		
XXIX	Զրույց «Հայ առաքելական եկեղեցու տաղավար տոները՝ Սուրբ Զատիկ» թեմայով։		
XXX	Քննարկում «Հիշում եմ և պահանջում» թեմայով։		
XXXI	Զրույց «Շրջակա միջավայր» թեմայով։		
XXXII	Քննարկում « Ինչ եմ ուզում դառնալ» թեմայով։		
XXXIII	Զրույց « Մեր երկրի անվտանգությունը մեր ձեռքերում է» թեմայով։		
XXXIV	Քննարկում «Եթե ես լինեի. . .»։ Ձևավորել հարգանք դիմացինի նկատմամբ։		